ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«__»_____2025թ. **N_____-Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2012 թվականի մարտի 16-ի «Քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանների կարգը սահմանելու մասին» N 405-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումը՝

1) Որոշման հավելվածի 7-րդ կետի 5-րդ ենթակետի 5.2-րդ պարբերությունից հետո լրացնել նոր 5.3-րդ պարբերություն.

«5.3) 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարական հրապարակները կազմակերպելիս և շինարարական աշխատանքների՝ մասնավորապես հողային աշխատանքների իրականացման ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում՝ ստորգետնյա կառուցապատման մակերեսի մեկ հարկի յուրաքանչյուր 500 քմ. (հինգ հարյուր) համար պետք է ապահովի ջրցան թնդանոթների և/կամ ջրցան այլ սարքավորումների տեղադրումը, որը կապահովի առնվազն 40մ. ցողման միջակայք: Ջրցան թնդանոթների և/կամ ջրցան այլ սարքավորումների կիրառմամբ Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի հողագրունտի մինչև 1 սմ խորությամբ շերտում նվազագույնը 8 տոկոս հարաբերական խոնավություն:».

2) Որոշման հավելվածի 7-րդ կետի 8-րդ ենթակետի 8.1-ին պարբերությունը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8.1) Կառուցապատողը պետք է կազմակերպի ավազի, ցեմենտի, գաջի, խիճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների պահեստավորումը փակ տարաներով կամ փակ փաթեթավորմամբ, ինչպես նաև կազմակերպի դրանց տեղափոխումը՝ փակ տարաներով կամ փակ փաթեթավորմամբ՝ փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից: Մինչև սույն որոշումն ուժի մեջ մտնելը տրամադրված շինարարության կամ քանդման թույլտվությունների հիման վրա Կառուցապատողների կողմից շինարարական աշխատանքների իրականացման համար սույն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով սահմանված լրացուցիչ պայմանները գործում են սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մեկ ամիս հետո:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16-Ի N 405-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը, իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը, առկա խնդիրների առաջարկվող լուծումները.

«Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով նախատեսվում է, որ Երևանի քաղաքի ավագանին ի լրումն քաղաքաշինական նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի՝ կարող է սահմանել Երևանում գործող նորմերի իրականացման լրացուցիչ պայմաններ:

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետի պահանջները՝ Երևան քաղաքի ավագանին 2012 թվականի մարտի 16-ի N 405-Ն որոշմամբ (այսուհետ՝ Որոշում) սահմանել է քաղաքաշինաիկան նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերով սահմանված նորմերի Երևանում իրականացման լրացուցիչ պայմանները:

Որոշման հավելվածի 2-րդ կետով սահմանված է, որ լրացուցիչ պայմանները՝ պարտադիր պահանջների և իրականացման ենթակա միջոցառումների համալիր է, որն ուղղված է Երևան քաղաքի շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու, փողոցների երթևեկության և հետիոտն անցումների անվտանգությունն ապահովելու, ինչպես նաև կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական պատշաճ վիճակն ապահովելու ուղղությամբ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացմանը:

Նույն հավելվածի 3-րդ և 4-րդ կետերի համաձայն՝ լրացուցիչ պայմանները տարածվում են այն անձանց վրա (կառուցապատողներ կամ քաղաքաշինական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցողներ, այսուհետ՝ Կառուցապատող), որոնց կողմից Երևան քաղաքի վարչական տարածքում գտնվող քաղաքաշինական գործունեության օբյեկտում կատարվող կամ կատարվելիք շինարարական աշխատանքների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ պահանջվում է շինարարության կամ քանդման թույլտվություն (այսուհետ՝ Կառուցապատվող օբյեկտ): Կառուցապատվող օբյեկտում քաղաքաշինական գործունեություն իրականացնելու իրավունք ունեցող անձինք պարտավոր են պահպանել սույն կարգով սահմանված լրացուցիչ պայմանները շինարարական աշխատանքների իրականացման բոլոր փուլերում:

Հավելվածի 6-րդ կետում նախատեսված են նույն որոշմամբ սահմանված լրացուցիչ պայմանները, իսկ 7-րդ կետով՝ դրանց կատարումն ապահովելու նպատակով իրականացվող միջոցառումների համախումբը:

Գործնականում Երևան քաղաքի շրջակա միջավայրի վրա շինարարական աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու ինչպես նաև կառուցապատվող օբյեկտներում շինարարական հրապարակների տարանջատման ու սանիտարական պատշաճ վիճակն ապահովելու նպատակով անհրաժեշտություն է առաջացել նույն որոշմամբ սահմանել լրացուցիչ պայմաններ ևս:

Նախագծով մասնավորապես առաջարկվում է նախատեսել, որ

- 4-րդ և 5-րդ աստիճանի ռիսկայնության օբյեկտների համար շինարարական հրապարակները կազմակերպելիս և շինարարական աշխատանքների՝ մասնավորապես հողային աշխատանքների իրականացման ողջ ընթացքում Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում՝ ստորգետնյա կառուցապատման մակերեսի մեկ հարկի յուրաքանչյուր 500 քմ. (հինգ հարյուր) համար պետք է ապահովի ջրցան թնդանոթների և/կամ ջրցան այլ սարքավորումների տեղադրումը, որը կապահովի առնվազն 40մ. ցողման միջակայք: Ջրցան թնդանոթների և/կամ ջրցան այլ սարքավորումների կիրառմամբ Կառուցապատողը շինարարական հրապարակի տարածքում պետք է ապահովի հողագրունտի մինչև 1 սմ խորությամբ շերտում նվազագույնը 8 տոկոս հարաբերական խոնավություն,

- Կառուցապատողը պետք է կազմակերպի ավազի, ցեմենտի, գաջի, խիճի, այլ սորուն նյութերի, հողային զանգվածների պահեստավորումը փակ տարաներով կամ փակ փաթեթավորմամբ, ինչպես նաև կազմակերպի դրանց տեղափոխումը՝ փակ տարաներով կամ փակ փաթեթավորմամբ՝ փոշու համար անթափանց ծածկոցներով ծածկված տրանսպորտային միջոցներով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ